

«Բազմահմուտ հայագէտն պ. Մէյէ իր կարգին խօսք առնելով աւելցուց հետեւեալը .

«Կը ձայնակցիմ պ. Հալէվիի, եւ՝ բաց ասովի՝ կը վկայեմ պ. Բաս «մաջեանի նկարագրին ազնուութեան : Թէեւ նիւթականէ գուրկ՝ սակաւարեր միջոցներով ստիպուած է իր ապրուսալ հայթայթել , այսու «հանգերձ ա՛յնքան անչահախնդիր է եւ ա՛յնքան ջերմ փափագ կը տաւ «ծէ գիտութեան եւ իր ազդին բարգաւաճման որ միջոցը գտած է ոչ թէ «միայն ձեռք բերել պ. Հալէվիի ակնարկած . ընդարձակ ծանօթութիւնները՝ այլ եւ հիմնել, ապրեցնել եւ առաջ տանիլ զուտ գիտական հան «գամանք կրող հանդէս մը . ուստի հարկ չկայ աւելին բսել անոնց որ «գիտեն թէ նմանօրինակ ձեռնարկ մը ի՞նչ յարատեւութիւն եւ ճիգ կը «պահանջէ :

«Պ. Միքայէլ Թամամշեանց , պսակաւոր իրաւագիտութեան մէջ , «Ասիական Ընկերութեան միակ հայ անդամը , ջերմագին կերպով ոյժ «տուաւ մեր պատուական պաշտօնակցին ընտրելիութեան , եւ միաձայն «հաւանութեամբ պ. Կ. Բասմաջեան ընդունեցաւ բազմահմուտ կածաւ «ոռորդներու ծափահարութեանց մէջտեղ» :

ԽՄԲ.

## ՀԱՇՈՒԵՑՈՒՅԱԿ

Պարիսի Հայոց կողմէ Վեհետիկ դրկուած երկու պատգամաւորներու ճանապարհածախուց համար եղած հանդանակութեան , ձեռամբ Արժ. Վ. քհ. Քիպարեանի եւ Մեծ. Կ. Բէհլիվանեանի . — Մեծ. Տեարք Ա. էգնաեան Փր. 40. Յ. Խակէնտէր 20, Յ. Ասլանկիւլ 20, Ս. Սվաճեան 20, Կ. Բէհլիվանեան 20, Թնկըր Եղբարք 20, Զօրաեան Եղբարք 20, Տիրան Քէմհանեան 10, Արամ Սիթեան 10, Սամուէլեան Եղբարք 10, Օտեան Եղբարք 10, Յ. Գէորգեան 10, Տիգրան խան Քէլէքեան 10, Մ. Մինասեան 5, Օ. Տողրամանեան 5, Մ. Տողրամանեան 5, Մ. Ասկեան 5, Մ. Տէր Միքաէլեան 5, Ա. Զարիֆեան 5, Բ. Բուլիկեան 5, Ն. Մանուկեան 5, Պ. Զուպուքմէան 5, Ալիք. Բուլճեան 5, Մ. Միքարամանց 5, Ս. Աշճեան 5, Ա. Բ. Գ. Բ. Տոք. Պ. Սերովիկեան 5, Ամն 5, Ամն 5, Ս. Սիսեան 3, Տ. Գալբաքճըեան 2 50 սնա. , Մ. Ալիքսանեան 2 50, Հ. Մարկոսեան 2 50, Հ. Ճեկանիրմեան 2 50, Ճէլալեան 2 50, Ե. Քըպեան 2 50, Գ. Փիւսկիւլեան 2 50, Ս. Յակորեան 2 50, Ամն 2 50, Ամն 2 50, Գ. Ետիկեար 2, Գրիգոր Քէթէնէնեած 2, Ամն 2, Վ. Վրդանէս 1=Գումար 332 Փր. 50 սնա. :

—ուսում—

Մեծ. Մ. Յովհաննէսեանի «Քննական պտմ. ԺԹ. դարու հայ դըպրութեան» գիրքը դրկած ենք միայն «Բանասէր»ի այն բաժանորդներուն որոնք կանխիկ վճարած են իրենց բաժնեգինը :

ԽՄԲ.